

տրութեան համար փութով սիւնհոդոս գումարուեցաւ, որուն մասնակցեցաւ նաեւ Սարգիս Վ.: Ասիկայ Սիւնհոդականաց ընտրելի ներկայացուց Աբրահամ եպիսկոպոս Կրետացին, Թրակիոյ առաջնորդը, որ տակաւին Էջմիածին էր եւ ուխտը կատարելէն ետեւ մեկնելու կը պատրաստուէր: Սակայն սիւնհոդոսականներէն ոմանք հակառակեցան ըսելով՝ թէ Աբրահամ օտար է, Էջմիածնի միաբան չէ, եւ բնաւ նուիրակութիւն չըսած չէ. այլք թէեւ կ'ուզէին զԱբրահամ, բայց նախ Կ. Պոլսոյ Պատրիարքին իմացընել կ'ուզէին: Սարգիս Աբրահամու ընդունակութիւնները գովեց, ընտրութեան փութացուցման պէտքը ցուցուց՝ տեղոյն քաղաքական դէպքերն յառաջ բերելով, եւ խոստացաւ որ ինքը սոյն ընտրութեան հաւանութիւնը կ'առնու Կ. Պոլսոյ Պատրիարքէն, իւր վարժապետէն: Ժողովը հաւանեցաւ, ընտրեց զԱբրահամ, եւ Աբրահամ Կաթողիկոս օծուեցաւ Նոյ. 24ին: Յաջորդ օրը նորընծայ Կաթողիկոսն զՍարգիս Վ. օծեց Արքեպիսկոպոս, եւ անձամբ անունը դրաւ «Շնորհալի»: Այս ամէնը գրուած են եպիսկոպոսական ձեռնագրութեան վկայագրին մէջ, որ «քառակնիք է եւ մեծագիր»:

Սարգիս Արքեպ. ձմեռն Էջմիածին անցուց եւ յաճախ քարոզեց խուռն բազմութեան: Յաջորդ տարին 1735ին գարնան դարձաւ իւր թեմը, եւ նոյն տարին Կ. Պոլիս գնաց, Յովհ. Կոլոտ Պատրիարքէն եւ Ժողովուրդենէն սիրով ընդունուեցաւ, եւ դառնալով իւր թեմը, Ժո-